ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2025 թվականի N 1342-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 252-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 252-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) հավելվածը «ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ» բառերից հետո լրացնել «ԲԱԺԻՆ 1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ» բառերով.

2) հավելվածը վերջին գլխից հետո լրացնել 2-րդ բաժնով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և՝

1) տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մշակվող ռազմավարական պլանավորման նոր փաստաթղթերի վրա, որոնք դեռևս չեն ներկայացվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման՝ բացառությամբ «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով սահմանված վիճակագրական ծրագրերի.

2) սույն որոշման հավելվածի 180-րդ կետն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 31-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանվում են՝

1) ռազմավարական կառավարման աշխատակարգի 159-րդ կետում նշված յուրաքանչյուր ռազմավարությունը կառավարող փոխվարչապետը և 161-րդ կետում նշված աշխատանքային խմբի ձևավորման կարգը, կազմը և աշխատակարգը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին գործող յուրաքանչյուր ռազմավարական պլանավորման փաստաթղթի առնչությամբ սույն որոշման 4-րդ կետով նախատեսված անհրաժեշտ գործողությունը, նշված գործողության ժամկետը և իրականացման համար պատասխանատու մարմինը:

4. Գործող ռազմավարական պլանավորման փաստաթղթի առնչությամբ անհրաժեշտ գործողություններն են՝

1) սույն որոշման հավելվածի 159-րդ կետում նշված ռազմավարություններում գործող ռազմավարական փաստաթղթի ներառում՝ համապատասխան փոփոխություններով կամ լրացումներով և գործող ռազմավարական փաստաթղթի ուժը կորցրած ճանաչում, կամ

2) գործող ռազմավարական փաստաթղթի համապատասխանեցում սույն որոշման հավելվածով սահմանված դրույթներին, կամ

3) գործող ռազմավարական փաստաթղթի ուժը կորցրած ճանաչում:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 9-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանվում են սույն որոշման հավելվածի 160-րդ կետի 3-րդ ենթակետով, 164-րդ, 182-րդ, 192-րդ կետերով և 198-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված մեթոդական ուղեցույցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ